

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Աշոտ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործ ամբիոնի ասպիրանտ
“Ամբերդ” հետազոտական կենտրոնի կրտսեր փորձագետ

Հիմնաբառեր. էլեկտրոնային փողեր, դեբետային քարտեր, վճարային միջոցներ, փողեր թողարկող ինստիտուտներ:

Ձարգացած երկրների փորձը վկայում է, որ բանկային ծառայությունների զարգացման հիմնական ուղղություններից մեկը կապված է վճարային էլեկտրոնային տեխնոլոգիաների զարգացման և էլեկտրոնային փողերի ներդրման հետ:

Համաձայն էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպությունների (EMI) վերաբերյալ Եվրոմիության հրահանգի (EU Directive 2009/110/)՝ «էլեկտրոնային փողերն իրենցից ներկայացնում են թողարկողի պարտավորությամբ սահմանափակված դրամական միջոցներ, որոնք տրվում են հաճախորդի կողմից փոխանցված միջոցների փոխարեն, գրառվում էլեկտրոնային սարքավորման (համակարգչի կամ միկրոչիպի) վրա և ընդունվում են վճարման թողարկողից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից»¹: Եվրոհրահանգը կարգավորման հիմնական սուբյեկտ է համարում «էլեկտրոնային փողերի ինստիտուտը»՝ վարկային կազմակերպությունից տարբեր իրավաբանական անձ, որը թողարկում է վճարային միջոցներ էլեկտրոնային փողերի ձևով: Էլեկտրոնային փողեր թողարկող ինստիտուտները պարտավոր են ոչ ուշ, քան տարին երկու անգամ վերահսկող մարմնին տեղեկատվություն տրամադրել սեփական կապիտալի և էլեկտրոնային փողերի էմիսիայի հետ կապված ֆինանսական պարտավորությունների, ինչպես նաև ակտիվների, որում իրականացվում են ներդրումներ: Եվրոհրահանգով էլեկտրոնային փողերի ինստիտուտների կանոնադրական կապիտալը 1մլն. եվրոյից իջեցվեց մինչև 350 հազար եվրո:

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի²:

«էլեկտրոնային փողը թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեքն է, որը՝

¹ Д А Кочергин Электронные деньги. Учебник ЦИПСИР, 2011. с11.

² «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային հարաբերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 3

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժույթունը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը,
- ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից.
- շահառուն վճարման ստացման վերջնական հասցեատերն է»:

Դժվար չէ նկատել, որ բերված սահմանումը նույնությամբ փոխառնված է Եվրոհրահանգի բերված սահմանումից: Ըստ էության, էլեկտրոնային փողն իրենից ներկայացնում է էլեկտրոնային եղանակով գրառված դրամական արժեք: Հաճախորդը գնում է էլեկտրոնային արժեք, որը պակասեցվում է յուրաքանչյուր գործարքի ժամանակ:

Էլեկտրոնային փողը կարելի է սահմանել որպես փողի էլեկտրոնային տարբերակ, քանի որ նրան բնորոշ են փողի գրեթե բոլոր հատկանիշները: Հիմնական նմանությունն այն է, որ էլեկտրոնային փող օգտագործելիս բանկից կամ այլ տեղից հեղինականացում ստանալու անհրաժեշտություն չկա. մարդիկ գնում են մետաղադրամին և թղթադրամին համարժեք էլեկտրոնային փող և օգտագործում այն որպես սովորական փող: Մյուս կարևոր նմանությունը փողի հետ նրա անանունությունն է (anonymity). էլեկտրոնային փող օգտագործելու համար ֆինանսական հաստատությունում հաշվի առկայություն չի պահանջվում: Սրանով էլ այն էականորեն տարբերվում է հասանելիության միջոցներից (access products), ինչպիսիք, օրինակ, դեբետային քարտերն են: Աղյուսակ 1-ում ներկայացվում է էլեկտրոնային փողերի և կանխիկի առավելությունների և թերությունների համեմատական վերլուծությունը:

Աղյուսակ 1. Էլեկտրոնային փողերի առավելությունները և թերությունները

Առավելությունները	Թերությունները
-անձի նույնականացում (pin--ով)	- պահանջում է որոշակի տեխնիկական սարքավորումներ
-շրջանառությունն ավելի էժան է	-էլեկտրոնային փողեր կիրառողները տեղյակ չեն խարդախություններից
-մանրի հետ կապված պրոբլեմներ	-խարդախությունը կարող է առաջացնել համակարգային ռիսկ
-մաքրությունը	-անվտանգության միջոցառումները շատ թանկ են
-այն կարող է փոխանցվել ցանցի միջոցով (օրինակ՝ Ինտերնետի)	-անանունության հետ կապված կոնֆլիկտները
-հնարավոր է՝ տոկոսների ստացում	-հարմար չէ փողը պահել տանը:
-հնարավոր է՝ վճարումներ առանց անմիջական շփման	
հնարավոր է՝ վերալիցքավորում	
հեռախոսի, ինտերնետի, և այլնի միջոցով:	

Կանխիկ առավելությունները և թերությունները

Առավելությունները	Թերությունները
-չի պահանջում տեխնիկական սարքավորումներ -վճարումը բավականին պարզ է -կեղծիքներն ավելի հեշտ է հայտնաբերել -համակարգային ռիսկն աննշան է -ապահովվում է վերջնականությունը - հարմար է փողը տանը, այլ ոչ բանկում պահելու համար:	-այն կարող է կորել կամ գողացվել -կանխիկի շրջանառությունը թանկ է -մանրի պրոբլեմ կարող է առաջանալ -կեղծիքները շատ են -լայնորեն կիրառվում է անօրինական գործառնություններում -կեղտոտ է և կարող է հիվանդությունների տարածման առիթ հանդիսանալ -կանխիկը տոկոսներ չի բերում:

Էլեկտրոնային փողերի առաջացման սկզբնական շրջանում առաջարկվում էր դրանց թողարկումը թույլատրել միայն կենտրոնական բանկերին: Սակայն Եվրոխորհուրդն ուներ իր ուրույն դիրքորոշումը հետապնդելով մի շարք նպատակներ՝

- ✓ իրականացնել եվրոյով փոքրածավալ միջազգային փոխանցումներ, նախքան թղթադրամների և մետաղադրամների հայտնվելը,
- ✓ խթանել էլեկտրոնային առևտրի զարգացումը,
- ✓ ստեղծել համապատասխան իրավական դաշտ,
- ✓ խրախուսել շուկա նոր մուտք գործողներին (ոչ բանկ կազմակերպություններին),
- ✓ խթանել մրցակցությունը և էլեկտրոնային փողերի բնագավառում նորարարությունները:

Եվրոմիությունում առաջ քաշվեց նոր տիպի կազմակերպություն՝ էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպություն (EMI) ստեղծման գաղափարը, ավելի թեթև վերահսկողությամբ քան այլ վարկային կազմակերպությունների վերահսկողությունը: Մի երկրում լիցենզիա ստացած EMI-ն ունենում էր անձնագիր և իրավունք էր ստանում էլեկտրոնային փողեր թողարկել նաև Եվրոմիության այլ երկրներում: Եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ) համաձայն չէր այս դիրքորոշման հետ: Էլեկտրոնային փողերին վերաբերող 1998թ. իր զեկույցում ԵԿԲ-ը ներկայացրեց էլեկտրոնային փողերի և դրանց վերահսկողության վերաբերյալ իր տեսակետը և մտահոգությունները: Սակայն ի վերջո ԵԿԲ-ը զիջեց իր դիրքերը և հավանություն տվեց վերահսկման նախնական մոդելին: Երկու տարի անցավ էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպություններին (EMI) վերաբերող Եվրոմիության հրահանգի նախնական (1998թ.) և վերջնական (2000թ.) տարբերակների պաշտոնական հրատարակման միջև: Այս ընթացքում բանակցություններ են տարվել Եվրոխորհրդի, Եվրոպառլամենտի, կենտրոնական բանկերի, ֆինանսների նախա-

րարությունների և եվրոպական կենտրոնական բանկի միջև: Այն ուժի մեջ մտավ 2002թ. ապրիլի 27-ին և ներառում է էլեկտրոնային փողերի և դրանք թողարկող կազմակերպությունների հստակ նկարագրությունը:

Ի տարբերություն եվրոպական շատ ԿԲ-երի, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը ի սկզբանե շատ հանգիստ էր վերաբերում էլեկտրոնային փողերի տարածմանը՝ մեկնաբանելով, որ վաղ վերահսկումը կարող է խաթարել նորարարությունների զարգացմանը: ԴՊՅ-ն պատասխանատվություն է կրում վճարային համակարգի անվտանգության և ամբողջականության համար: Սակայն դա չի տարածվում էլեկտրոնային փողեր թողարկող ոչ բանկ կազմակերպություններին, քանի որ կանխավճարված քարտերը, սմարթ քարտերը և էլեկտրոնային քսակները դիտարկվում են որպես պարտավորություն, այլ ոչ դեպոզիտ: Դրամական փոխանցումներին վերաբերող օրենքների համաձայն վճարային ծառայություններ մատուցող ոչ բանկ կազմակերպությունները ենթարկվում են որոշակի վերահսկողության (լիցենզավորման, ռեզերվների, կապիտալի պահանջներ): Բանկային օրենքների համաձայն, եթե վճարային ծառայություն մատուցող կազմակերպություններն առաջարկում են էլեկտրոնային վճարումների գործիքներ, որոնք կցված են հաշվին, ապա դա դիտարկվում է որպես բանկային գործունեություն: 2000թ. հուլիսին ընդունվեց «դրամական ծառայությունների միացյալ ակտը» (UMSA), որը սահմանում է դրամական վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերահսկողության միացյալ կանոններ բոլոր նահանգների համար: Այդ ակտի համաձայն, էլեկտրոնային փողերի թողարկումը դիտարկվում է որպես դրամական վճարային ծառայություն, ինչպես օրինակ դրամական փոխանցումները կամ վճարային քարտերի թողարկումը: Յետևաբար, էլեկտրոնային փողեր թողարկողներին մոտենում են այնպես, ինչպես այլ ոչ բանկ կազմակերպություններին:

ԱՄՆ-ում վճարային վերահսկողությունը վերաբերվում է ոչ թե բանկային հաստատություններին, ինչպես եվրոպայում, այլ կոնկրետ վճարային ծառայություններին: Նրանք էլեկտրոնային փողերը դիտարկում են որպես մեկ այլ վճարային ծառայություն, որն ավելի շատ նմանություն ունի ճանապարհային չեկերի, փոխանցումների հետ, քան կանխիկի:

Ոչ բանկ կազմակերպությունների համար էլեկտրոնային փողերի վերահսկման ամերիկյան տարբերակն ունի մի թերություն. նահանգների միջև կարող են վերահսկողության մեխանիզմների տարբերություններ լինել, քանի որ ոչ մի անձնագիր չի պահանջվում: Սակայն միևնույն ժամանակ ունի նաև առավելություն. վերահսկողությունը շատ ավելի թեթև է:

Չամաձայն էլեկտրոնային փողերի իրավական սահմանման (Article 1 of the European Parliament and Council Directive 2000/46/EC)՝ էլեկտրոնային փողը պետք է ընդունվի որպես վճարային գործիք ոչ միայն թողարկողի, այլ նաև այլ սուբյեկտների կողմից: Դրանով էլ այն տարբերվում է սահմանափակ կիրառման շրջանակ ունեցող էլեկտրոնային վճարային գործիքներից, ինչպիսիք, օրինակ, աբոնեմենտային և ակումբային քարտերը: Վերջիններս, ընդունվելով որպես վճարային գործիք միայն թողարկողների կողմից, չեն հանդիսանում էլեկտրոնային փող:

Էլեկտրոնային փողը կարող է լինել տեխնիկական սարքի, օրինակ՝ չիպի վրա գրառված արժեքի (card-based e-money) կամ համակարգչային հիշողության ձևով (PC-based e-money): Ըստ դրա՝ էլեկտրոնային փողերը լինում են.

Քարտային,

Ներկայումս Եվրոպայում գոյություն ունի էլեկտրոնային փողերի քարտային ավելի քան 25 տարբեր սխեմաներ, որոնք մատուցվում են ֆինանսական կազմակերպությունների կողմից: Որոշ քարտային սխեմաներ թույլ են տալիս վճարումներ իրականացնել նաև Ինտերնետի միջոցով: Այնուամենայնիվ, քարտային էլեկտրոնային փողերով իրականացվող գործառնությունները կազմում են Եվրոմիության անկանխիկ վճարումների 0.5%-ը: Դրանք ավելի տարածված են Բելգիայում և Լյուքսեմբուրգում:

Քարտային էլեկտրոնային փողերի սխեմաների օրինակներ են՝ Mondex (Մեծ Բրիտանիա), Proton (Բելգիա), Moneo (Ֆրանսիա), Mondex, GeldKarte (Գերմանիա), MiniCASH (Լյուքսեմբուրգ) և Chipknip (Նիդերլանդներ), ինչպես նաև՝ Chipper (Նիդերլանդներ, Ավստրալիա), Avant (Ֆինլանդիա), Belcard (Յուգոսլավիա), Carta facile (Իտալիա), Cash (Շվեդիա), Cashcard (Շվեյցարիա), CLIP (գլոբալ տարածման), Visa Cash (Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Կոլումբիայի, Չինո Կոնգո, Իսլանդիայի, ճապոնիայի, Մեքսիկայի, ԱՄՆ-ի և Եվրոպայի համատեղ ջանքերով):

Mondex (Մեծ Բրիտանիա), որն առաջին անգամ նախաձեռնվել է 1990թ. National Westminster Bank-ի կողմից: 1993թ. նրան միացավ նաև Midland Bank-ը: Տեխնիկական սպասարկումն իրականացվում էր British Telecom-ի կողմից: Mondex-ի առաջին իրական նախագիծը սկսվել է 1995թ. հուլիսին: Mondex-ը բանկերի կողմից թողարկվող քարտային էլեկտրոնային փողերի լավագույն օրինակն է: Այս քարտային համակարգի շրջանակներում էլեկտրոնային փողերը թողարկվում են Mondex-ի միասնական կենտրոնի կողմից: Բանկերի հաճախորդներն իրենց բանկային հաշիվներից միջոցները փո-

խանցում են վճարային քարտերի վրա, որից հետո վճարումներն իրականացվում են այդ գումարի սահմաններում: Գումարը հաճախորդի քարտից փոխանցվում է վաճառողի քարտին: Կիրառելով հատուկ էլեկտրոնային քսակ՝ Mondex-ի քարտատերը կարող է ստուգել իր քարտային մնացորդը և փոխանցել դրամական արժեքը մեկ այլ քարտի վրա, իսկ հատուկ ներդիրի միջոցով՝ նաև փող փոխանցել հեռախոսի և այլ սարքերի միջոցով:³ Արևմուտքում լայն տարածում ունեն նաև ոչ բանկ կազմակերպությունների կողմից թողարկվող չիպային քարտերը, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել որոշակի վճարահաշվարկային գործառնություններ:

Mondex-ը ոչ մի ստորագրություն, PIN-կոդ և հեղինականացում չի պահանջում, որն իր հերթին ունի 2 կարևոր հետևանք. նախ՝ գործառնություններն իրականացվում են անմիջականորեն 2 մասնակիցների միջև և գործառնության արժեքը ձգտում է 0-ի, հետո՝ համակարգը բացարձակ անանուն է: Այսինքն, դրանք իրական կանխիկ փողն է էլեկտրոնային եղանակով: Եթե Mondex քարտը կորում է, ապա կորում են նաև նրա վրա գրանված փողերը: Այնուամենայնիվ, բացի քարտատիրոջից ոչ ոք չի կարող օգտվել այդ քարտից: Ուստի դրանք գողանալու իմաստ չկա: Այն բանից հետո, երբ քարտը լիցքավորվում է բանկի կողմից, փողի հետագա շարժերը հայտնի են լինում միայն քարտատիրոջը: Ոչ մի այլ անձ չի կարող այլևս հետևել դրանց շարժը:

Mondex-ի առավելություններն են՝ նրա անվտանգությունը, 2 անձանց միջև (person-to-person) փոխանցումներ իրականացնելու հնարավորությունը, արժեքի ակնթարթային փոխանցումը և բազմարժութային հնարավորությունը (քարտը կարող է միաժամանակ կիրառվել 5 արտարժույթով): Նրա հեռախոսային և ինտերնետային հավելվածները հնարավորություն են տալիս 2 անձանց միջև փոխանցումներն իրականացնել աշխարհի ցանկացած տեղից: 1999թ. Mondex-ը դարձավ առաջին և միակ սմարթ քարտը, որն համապատասխանում է ITSEC (Information Technologies Security Evaluation Criteria) չափանիշի E6 մակարդակին, որն իրենից ներկայացնում է անվտանգության բարձրագույն մակարդակը: 2001թ. Mondex-ը նորից ստացավ անվտանգության նոր՝ EAL4+ բարձրագույն մակարդակի սերտիֆիկացում: Բլոկավորման ֆունկցիան հնարավորություն է տալիս քարտատիրոջը կանխել անօրինական մուտքը համակարգ: Կողմ ընտրվում է քարտատիրոջ կողմից և կարող է ցանկացած պահի փոփոխվել նրա կողմից (օրինակ՝ եթե այն կորի կամ գողացվի): Mondex-ի առավելություններից է նաև նրա էժանությունը. գործառնությունների դիմաց ոչ մի վճարում չի պահանջում, որի շնորհիվ դրանք ավելի հարմար է կիրառել, քան վարկային քարտերը: Բացի այդ, վերջիններս

³ <https://en.wikipedia.org/wiki/Mondex>

հնարավոր չէ կիրառել մանրածախ վճարումների համար, իսկ Mondex-ը⁴ ընձեռում է նման հնարավորություն:

Վերջերս նախագծեր են մշակվել էլեկտրոնային փողերի տարբեր սխեմաների համագործակցության և համատեղ կիրառման համար: Դրանցից են Ducato նախագիծը (որն ընդգրկում է Banksys-ը, Groupement des Cartes Bancaires “CB”-ն, MasterCard Europe-ը, Interpay Niderland NV-ն, Proton World-ը, Sermepa-ն, Sistema 4B-ն և Visa International-ը), ինչպես նաև GeldKarte-ի և MiniCASH-ի համատեղ նախագիծը:

Համակարգչային.

Համակարգչային էլեկտրոնային փողերի համեմատաբար մեծ նախագծերից է E-cash-ը, որը ձևավորվել է Նիդեռլանդներում: Այն իրենից ներկայացնում է համակարգչի մեջ գրառված էլեկտրոնային փողեր, որոնց միջոցով հնարավոր է կատարել ինտերնետ-վճարումներ: Այսինքն՝ E-cash-ը և նման այլ սխեմաները վիրտուալ էլեկտրոնային փողեր են, որոնք այլ կերպ անվանվում են ցանցային փողեր: Սրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ վճարումներն իրականացվում են օգտագործողից օգտագործողին՝ առանց համակարգի կենտրոնական օպերատորի մասնակցության: Սակայն թերությունն այն է, որ տեխնիկապես անհնար է անմիջապես օգտագործել կամ վիրտուալ էլեկտրոնային փողեր ընդունող այլ օգտագործողի ուղարկել ստացված ցանցային փողերը

Համակարգչային էլեկտրոնային փողերի սխեմաների օրինակներ են՝ PayPal, ecash, CyberCash, NetCash, Internetcash (ԱՄՆ), DuoCash (ԱՄՆ), AMADIGI (Մեծ Բրիտանիա), Virtual Cash (Իսպանիա), Cybertarjeta (Իսպանիա), Cartio Micropayments (Նիդերլանդներ և ամբողջ աշխարհ), Digi Gold (գլոբալ), Safetrader (ամբողջ աշխարհ), և այլն:

PayPal PayPal Inc.-ն ունի լիցենզիա ԱՄՆ-ի 29 նահանգների բանկերի և ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող հաստատությունների կողմից: Բացվում է 3 տիպի հաշիվ՝ անձնական (Personal Account), հիմնական (Premier Account) և բիզնես (Business Account): Համակարգ մուտքագրված միջոցները պահվում են Wells Fargo բանկի հաշիվների վրա: Գրանցման համար անհրաժեշտ է լրացնել դիմումը, բացել վերոնշյալ հաշիվներից մեկը և մուտքագրել գումար: Հաշիվը կարելի է համալրել բանկային փոխանցմամբ կամ վճարային քարտի միջոցով: PayPal-ով օգտվելու համար հատուկ ծրագրային ապահովում անհրաժեշտ չէ, քանի որ բոլոր գործընթացներն իրականացվում են ինտերնետ կայքի միջոցով: Հաշվի ան-

⁴ <http://www.cdiscout.com/m-8761-mondex.html>

վտանգության ապահովման համար կիրառվում են օգտագործողների գաղտնաբառեր, իսկ կայքին միացումն ապահովվում է SSL պրոտոկոլի միջոցով (128-բիթ և ավելի):

PayPal-ն իր օգտագործողներին առաջարկում է հետևյալ տիպի ծառայություններ⁵

- վճարման իրականացում (Send Money).
- վճարում ստանալու հարցում/հայց (Money Request).
- ինտերնետ կայքի ծառայություններ (Web Tools).
- աճուրդային առևտրի իրականացման ծառայություններ (Auction Tools). այս ծառայությունը լինում է 2 տեսակի՝ վճարումը ստանալու ավտոմատ հարցումներ (Automatic Payment Request), և աճուրդը հաղթողների կողմից վճարման իրականացում անմիջականորեն աճուրդն իրականացնող կայքից (Instant Purchase for Auctions):

Մատուցվող ծառայությունների ցանկը կարող է կրճատվել կամ սահմանափակվել՝ կապված PayPal վճարային համակարգի կողմից տվյալ երկրի ու տարածաշրջանի հետ աշխատելու ցանկության և վստահության մակարդակից: Հետխորհրդային տարածքում առավել հայտնի համակարգերից է WebMoney Transfer-ը, որը 1998 թվականին հիմնադրված միջազգային հաշվարկների և բիզնեսի համացանցային համակարգ է: Համակարգի օպերատոր է հանդիսանում WM Transfer Ltd. կազմակերպությունը, որը ֆինանսական կազմակերպություն չէ և չի իրականացնում ֆինանսական գործառնություններ, բացառությամբ՝ WebMoney Transfer համակարգի ապարատա-ծրագրային համալիրի պրոցեսինգի:

WebMoney Transfer WebMoney չեկերով հաշվարկների իրականացման համար դեպոնացված միջոցները հաշվառվում են «Չեկերով, կանխավճարային քարտերով հաշվարկների համար նախատեսված միջոցներ» հաշվեկշռային հաշվով, որն ունի մեծ իրացվելիություն և իրականացնում է միայն հաշվարկային գործառնություններ, որը բացառում է չվճարման ռիսկը:⁶

Միջնորդավճարը կազմում է գործարքի գումարի 0.8%-ը՝ անկախ հեռավորությունից և երկրից:

Համակարգով մատուցվում են բազմաթիվ ծառայություններ, որոնց թվում փոխարկման, վարկավորման, թվային չեկերի տրամադրման, հեռա-

⁵ <https://en.wikipedia.org/wiki/PayPal>

⁶ <http://www.wmtransfer.com/eng/information/rates/index.shtml>

խոսային հաշիվների վճարման, արբիտրաժի, տրաստային, հավաստագրման, ատեստավորման և այլ տեսակի ծառայություններ: Համակարգում շրջանառվում են մի քանի տեսակի արժույթներին համարժեք էլեկտրոնային միավորներ/քսակներ, որոնցից յուրաքանչյուրի գծով թողարկումն իրականացնում է առանձին Երաշխավորող-կազմակերպություն: Վերջինս պահպանում և կառավարում է թողարկված էլեկտրոնային միավորները, գույքային պատասխանատվություն կրում դրանց համար, սահմանում փոխարկման հարաբերակությունը, ապահովում տվյալ երկրում դրանց շրջանառության և կիրառման իրավական հիմնավորումները:

Համակարգի բոլոր մասնակիցներին տրվում է միասնական ինտերֆեյսներ՝ Երաշխավորողների մոտ էլեկտրոնային քսակների ձևով պահվող իրենց արժեքները կառավարելու համար.

R քսակ WMR- ռուսական ռուբլով ըստ ներկայացնողի բանկային չեկ
Zքսակ WMZ- ԱՄՆ դոլարով ապրանքների գնման նվիրատվության սերտիֆիկատ

Էքսակ WME-եվրոյով ըստ ներկայացնողի բանկային չեկ

ՍքսակWMS-ուկրաինական գրիվնայով բանկային հաշվի պահանջ

B քսակ WMB-բելոռուսական էլեկտրոնային փող և այլն:

Համակարգով գործունեության իրականացման համար անհրաժեշտ է ունենալ Keeper ծրագիրը, որը կախված մասնակցի տեխնիկական հնարավորություններից, գործունեության բնույթից և նախասիրություններից կարող է լինել 3 տեսակի⁷

- WM Keeper Classic, որն իրենից ներկայացնում է առանձին ծրագիր և տեղադրվում մասնակցի համակարգչի մեջ,

- WM Keeper Light, որն իրենից ներկայացնում է web-հավելված, որը չի պահանջում ծրագրային ապահովման տեղադրում մասնակցի համակարգչի մեջ, և գործունեության արդյունքը մասնակցի բրաուզեր է փոխանցվում պաշտպանված https-կապի միջոցով,

- Telepat, որը նախատեսված է մոբիլ սարքավորումների միջոցով ռեալ ժամանակում հաշվարկների իրականացման համար:

Գոյություն ունի տեսակետ, որ էլեկտրոնային փողերը դուրս կմղեն կանխիկ դրամը: Այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են էլեկտրոնային փողերի զարգացմանը: Դրանք են՝

- ✓ նոր պրոդուկտի ներդրման բարձր արժեքը,
- ✓ տեխնիկական ստանդարտիզացիա ապահովելու խնդիրը,
- ✓ սպառողների արձագանքը,

⁷ https://wiki.wmtransfer.com/projects/webmoney/wiki/WM_Keeper_WinPro

✓ բազային նորմատիվ-իրավական դաշտի անհրաժեշտությունը, որը կարևոր է ինչպես օգտագործողների և թողարկողների համար:

Էլեկտրոնային փողերին բնորոշ ռիսկերը

Գոյություն ունեն էլեկտրոնային փողերին բնորոշ որոշ յուրահատուկ ռիսկեր: Էլեկտրոնային փողերի կիրառումը նոր անորոշություններ է ավելացնում բանկերի և վճարային համակարգերի համար: Դրանց կիրառման դեպքում կտրուկ աճում են գործառնական և իրավական ռիսկերը:

Գործառնական ռիսկեր

ա) խարդախության ռիսկ. Կան որոշ խնդիրներ, որոնց առաջ կանգնում են մասնակիցները: Դրանք են՝

- տարբեր համակարգերի միջև ստանդարտացման մակարդակը (օրինակ՝ կառավարությունը կարող է ընտրել էլեկտրոնային ստորագրության մի այնպիսի ստանդարտ, որը տարբերվում է գործարար աշխարհի կողմից ընդունված ստանդարտից),

- որևէ մի կազմակերպությանը որպես էլեկտրոնային սերտիֆիկատ թողարկող հեղինակություն վայելող սուբյեկտի ճանաչումը,

- սերտիֆիկատը թողարկող հաստատության կողմից վարկային ռիսկի թույլատրելի մակարդակը,

բ) տեխնիկական ռիսկ.

Իրավական ռիսկ

Էլեկտրոնային փողերի հետ կապված կարևորագույն ռիսկերից մեկն այն է, թե ով պետք է դրանք թողարկի: Mondex-ը և այլ կազմակերպությունները ծրագրավորում են էլեկտրոնային փողերի վաճառքից ստացվող գումարները ներդնել (պահել) մի հատուկ «բանկում»: Այսինքն, ենթադրվում է, որ որևէ բանկի սնանկացումը չի հանգեցնի նրա կողմից թողարկված էլեկտրոնային փողերի վճարունակության իջեցմանը:

Գոյություն ունեն էլեկտրոնային փողերի թողարկման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք մտահոգում են կենտրոնական բանկերին: Դրանք են՝

- անվտանգությունը,

- իրավական հարաբերությունները,

- պրուդենցիալ հարցեր/վերահսկողություն,

- փողերի լվացման հետ կապված խնդիրներ,

- էմիսիոն եկամտի կորուստը,

- դրամավարկային քաղաքականության իրականացումը և դրամական ազդեցատների կիրառման էֆեկտիվությունը,

- վճարային համակարգի հսկողությունը (oversight),
- երկրների միջև փոխանցումների իրականացման խնդիրներ:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային փողերի թողարկման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝

1) էլեկտրոնային փողերի թողարկումը վճարահաշվարկային ծառայություն է, որն ունի իր առանձնահատկությունները և ենթակա է համապատասխան կարգավորման.

2) էլեկտրոնային փողերի թողարկումը նման է դեպոզիտային և/կամ դրամական փոխանցումների գործունեությանը, ինչպես նաև ենթադրում է վճարային գործիքի թողարկում, ուստի անհրաժեշտ է հստակ կարգավորել այս բնագավառը՝ հնարավոր ռիսկերը կառավարելու համար

3) էլեկտրոնային փողերի թողարկման նկատմամբ ոչ բանկ կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջարկը: Միջազգային փորձը վկայում է, որ էլեկտրոնային փողերի թողարկման նկատմամբ բանկերի հետաքրքրվածությունը մեծ չէ (ՀՀ-ում այն ընդհանրապես բացակայում է) և առաջարկը ներկայացվում է հիմնականում ոչ բանկ կազմակերպությունների կողմից, որոնք մասնագիտացված են այս բնագավառում

4) ՀՀ-ում էլեկտրոնային փողերի նկատմամբ աճող պահանջարկ:

5) էլեկտրոնային առևտրի զարգացման խթանումը.

6) ՏՏ բնագավառի զարգացմանն ուղղված ՀՀ քաղաքականությունը:

7) Միջազգային տնտեսական և վճարային ինտեգրման և իրավական դաշտերի համադրման ՀՀ քաղաքականությունը:

Համաձայն «վճարային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ներկայումս էլեկտրոնային փողերի թողարկման իրավասություն ունեն միայն ՀՀ տարածքում գործող բանկերը: Մինևույն ժամանակ, Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով ՀՀ ԿԲ-ն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել վճարահաշվարկային ծառայությունների իրականացման կանոններ և (կամ) վճարային գործիքների շրջանառության կանոններ և (կամ) հաշվարկների իրականացման ձևեր: Այնուամենայնիվ, ներկայումս բացակայում է էլեկտրոնային փողերի թողարկման, հաշվարկների իրականացման, սպասարկման գործառույթների կարգավորման համապատասխան ենթաօրենսդրական դաշտը:

ՀՀ-ում էլեկտրոնային փողերի թողարկման գործառույթի կարգավորման համար առաջարկում ենք որդեգրել կարգավորման փուլային մոտեցում՝

Առաջին փուլ (կարճաժամկետ/միջանկյալ լուծում). էլեկտրոնային փողերի թողարկման գործառույթը ներառել դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների համար թույլատրելի

ծառայությունների թվին՝ հնարավոր ռիսկերի զսպման համար սահմանելով որոշակի լրացուցիչ պահանջներ, որոնք բնորոշ են էլեկտրոնային փողերի թողարկմանը,

Երկրորդ փուլ (Երկարաժամկետ լուծում). նոր տեսակի վճարահաշվարկային կազմակերպության ստեղծում՝ Եվրամիության կողմից ընդունված էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպության (ԷՓԹԿ) մոդելի հիման վրա՝ կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ և մշակելով ԷՓԹԿ-ների գործունեության կարգավորման համար առանձին ենթաօրենսդրական ակտեր

Առաջին փուլում քանի որ ԷՓԹԿ-ների գործունեությունն ունի իր առանձնահատկությունները և հետևաբար նաև բնորոշ ռիսկեր, ուստի անհրաժեշտ է սահմանել որոշակի լրացուցիչ պահանջներ դրամական փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած այն կազմակերպությունների համար, որոնք նպատակ ունեն թողարկելու էլեկտրոնային փող..

- կնքել գրավոր կամ էլեկտրոնային պայմանագիր, որում հստակ սահմանված լինի թողարկողի անվերապահ պարտավորությունը ապահովելու գործառնությունների կատարումը,

- համակարգի կանոններում հստակ սահմանել թողարկված էլեկտրոնային փողերի վերադարձման/կանխիկացման (կանխիկ կամ անկանխիկ եղանակով), ինչպես նաև գործիքի գործողության ժամկետը լրանալուց հետո առկա էլեկտրոնային փողերը ռեալ փողերով փոխարինելու և հաճախորդին վերադարձնելու կարգն ու պայմանները,

- էլեկտրոնային փողերի շրջանառության միայն փակ մոդելի կիրառում, բացառելով էլեկտրոնային փողերի վերաօգտագործումը,

- էլեկտրոնային քսակների/կրիչների վրա պահվող միջոցների սահմանափակում. առավելագույն գումարի սահմանաչափ,

- ընդհանուր կապիտալի պահանջ,

- էլեկտրոնային փողերի թողարկման դիմաց կազմակերպության կողմից ստացված միջոցները կարող են ներդրվել միայն բարձր իրացվելի և ցածր ռիսկային ակտիվների մեջ,

- հաճախորդի և թողարկողի միջև հարաբերությունների փաստաթղթավորում. հաճախորդի հետ գրավոր կամ էլեկտրոնային պայմանագրի կնքում,

- էլեկտրոնային քսակների/կրիչների վերալիցքավորման հստակ կանոններ. գործունեության կանոններում պետք է հստակ սահմանված լինեն էլեկտրոնային քսակների վերալիցքավորման պայմաններն ու կարգը:

Աշոտ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Էլեկտրոնային փողերի դերը և արդիականությունը բանկային համակարգում

Հիմնաբառեր. էլեկտրոնային փողեր, դեբետային քարտեր, վճարային միջոցներ

Էլեկտրոնային փողերի թողարկման դերը կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում: Այն ստեղծում է հնարավորություններ վիրտուալ համակարգում գնումներ կատարելու համար: Ինտերնետային առևտրի ծավալների ավելացմանը զուգընթաց՝ մեծանում են էլեկտրոնային փողերի թողարկման հնարավորությունները: Հոդվածում ներկայացվել են էլեկտրոնային փողերի սահմանումները, դրանց նշանակությունը, առաջացման դրդապատճառները, էլեկտրոնային և կանխիկ փողերի առավելություններն ու թերությունները և դրանց բնորոշ ռիսկերը:

Ашот КИРАКОСЯН

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ЭЛЕКТРОННЫХ ДЕНЕГ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ

Ключевые слова: электронные деньги, дебитные карты, платежные средства

Роль электронной денежной системы важна для развития информационных технологий. Она создает возможности для покупок в виртуальном пространстве. Электронная торговля имеет преимущество с точки зрения пользователя и продавца. В статье представлены современные определения электронных денег, их роль и значение, причины возникновения, преимущества и недостатки электронных и наличных денежных средств, а также риски связанные с ними.

Ashot KIRAKOSYAN

THE ROLE AND IMPORTANCE OF ELECTRONIC MONEY IN THE BANKING SYSTEM

Key words: e-money, debit cards, payment instruments, payment and accounting organizations

The role of e-money system is very important for the development of information technology. It creates new opportunities for shopping in the virtual space. Along with the increase in Internet commerce, the possibilities of issuing electronic money increase as well. The article presents the current definition of electronic money, its role and importance, causes, advantages and disadvantages of electronic and cash money, as well as the risks associated with them.